Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

# Saint Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

**Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan**
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
*Pastoral office* t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

# SUNDAY BULLETIN

**1: Today's Scripture Reading, 4th April 2021 Bulletin 15/2021**

## EASTER SUNDAY

## ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 1:15-26

Այդ օրերը՝ Պետրոս կանգնեցաւ աշակերտներուն մէջ, (հաւաքուած բազմութիւնը հարիւր քսան հոգիի չափ էր,) եւ ըսաւ. «Մարդի՛կ եղբայրներ, պէ՛տք էր որ իրագործուէր այն գրուածը, որ նախապէս Սուրբ Հոգին ըսեր էր Դաւիթի բերանով՝ Յուդայի մասին, որ առաջնորդ եղաւ Յիսուսը բռնողներուն. որովհետեւ ան մեզի հետ՝ մեր համրանքէն էր, եւ բաժին վիճակուած էր անոր այս սպասարկութենէն: Ուրեմն ասիկա տիրացաւ ագարակի մը՝ անիրաւութեան վարձքով, ու գլխիվայր իյնալով՝ մէջտեղէն ճեղքուեցաւ, եւ իր բոլոր աղիքները դուրս թափեցան: Երուսաղէմի բոլոր բնակիչները գիտցան այս բանը, այնպէս որ այդ ագարակը կոչուեցաւ իրենց բարբառով Ակեղդամա, այսինքն՝ Արիւնի ագարակ:
Որովհետեւ գրուած է Սաղմոսներու գիրքին մէջ. "Անոր բնակարանը ամայի թող ըլլայ, եւ անոր մէջ ո՛չ մէկը բնակի", նաեւ. "Անոր պաշտօնը ուրի՛շը առնէ":

Ուրեմն պէտք է որ այս մարդոցմէն՝ որոնք մեզի հետ էին այն ամբողջ ժամանակը, երբ Տէր Յիսուս մտաւ ու ելաւ մեր մէջ, Յովհաննէսի մկրտութենէն սկսեալ մինչեւ այն օրը՝ երբ համբարձաւ մեզմէ, ասոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեան»: Ուստի երկու հոգի կայնեցուցին, Յովսէփը՝ որ Բարսաբա կը կոչուէր եւ Յուստոս մականուանուեցաւ, ու Մատաթիան, եւ աղօթելով՝ ըսին. «Տէ՛ր, դուն որ կը ճանչնաս բոլորին սիրտերը, յայտնէ՛ մեզի թէ ո՛ր մէկը ընտրեցիր այս երկուքէն. որպէսզի բաժին առնէ այս սպասարկութենէն ու առաքելութենէն, որմէ Յուդա ինկաւ՝ երթալու համար իր տեղը»: Եւ անոնց համար վիճակ ձգեցին, ու վիճակը ելաւ Մատաթիայի. եւ ան համրուեցաւ տասնմէկ առաքեալներուն հետ:

## Acts 1:15-26;

In those days Peter stood up among the brothers (the company of persons was in all about 120) and said, "Brothers, the Scripture had to be fulfilled, which the Holy Spirit spoke beforehand by the mouth of David concerning Judas, who became a guide to those who arrested Jesus. For he was numbered among us and was allotted his share in this ministry." (Now this man acquired a field with the reward of his wickedness, and falling headlong he burst open in the middle and all his bowels gushed out. And it became known to all the inhabitants of Jerusalem, so that the field was called in their own language Akeldama, that is, Field of Blood.) "For it is written in the Book of Psalms,

"'May his camp become desolate, and let there be no one to dwell in it'; and "'Let another take his office.'

So one of the men who have accompanied us during all the time that the Lord Jesus went in and out among us, beginning from the baptism of John until the day when he was taken up from us—one of these men must become with us a witness to his resurrection." And they put forward two, Joseph called Barsabbas, who was also called Justus, and Matthias. And they prayed and said, "You, Lord, who know the hearts of all, show which one of these two you have chosen to take the place in this ministry and apostleship from which Judas turned aside to go to his own place." And they cast lots for them, and the lot fell on Matthias, and he was numbered with the eleven apostles.

**Our Aim;**
**St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship**.

## 2: A short interpretation of the Scripture reading

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 16:2-8

The Resurrected Christ

Մէկշաբթի առտուն՝ շատ կանուխ, երբ արեւը կը ծագէր, գացին գերեզմանը, ու կ՚ըսէին իրարու. «Մեզի համար ո՞վ պիտի գլորէ քարը՝ գերեզմանին դռնէն», որովհետեւ շատ մեծ էր: Բայց նայելով՝ տեսան թէ քարը գլորուած էր: Մտնելով գերեզմանէն ներս՝ տեսան երիտասարդ մը, որ նստած էր աջ կողմը՝ ճերմակ պարեզօտ հագած, եւ զարհուրեցան: Ան ալ ըսաւ անոնց. «Մի՛ զարհուրիք. Յիսուս Նազովրեցի՛ն կը փնտռէք՝ որ խաչուեցաւ: Ան յարութի՛ւն առաւ, հոս չէ: Ահա՛ այն տեղը՝ ուր դրին զայն: Ուրեմն գացէ՛ք, ըսէ՛ք անոր աշակերտներուն ու Պետրոսի՝ թէ ահա՛ ձեզմէ առաջ կ՚երթայ Գալիլեա. հո՛ն պիտի տեսնէք զայն՝ ինչպէս ըսաւ ձեզի»: Անոնք՝ դողով եւ հիացումով համակուած՝ դուրս ելան՝ ու փախան գերեզմանէն, եւ ո՛չ մէկ բան ըսին ոեւէ մէկուն, քանի որ կը վախնային:

### The Holy Gospel of Jesus Christ according to Mark 16:2-8

And very early on the first day of the week, when the sun had risen, they went to the tomb. And they were saying to one another, “Who will roll away the stone for us from the entrance of the tomb?” And looking up, they saw that the stone had been rolled back—it was very large. And entering the tomb, they saw a young man sitting on the right side, dressed in a white robe, and they were alarmed. And he said to them, “Do not be alarmed. You seek Jesus of Nazareth, who was crucified. He has risen; he is not here. See the place where they laid him. But go, tell his disciples and Peter that he is going before you to Galilee. There you will see him, just as he told you.” And they went out and fled from the tomb, for trembling and astonishment had seized them, and they said nothing to anyone, for they were afraid.

### Սբ. Հարության տոն

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե Հին, և թե Նոր Կտակարաններում համարվում է 5 տաղավար տոներից մեկը: Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը եւ Սողոմեն, գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ և ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ. 24:5-6):

Հարության լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո Հիսուսը երևում է նրանց: Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության և հավատի հիմքը: «Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:13-14): Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում: Ձուն համարվում է հարության եւ նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ Ս.Գրիգոր Տաթևացու՝ «Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրինակ է աշխարհի և ինչպես իմաստուններն են ասում. «Դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»: Սբ. Հարության տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Սբ. Պատարագ, որով սկսվում են զատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվում Սբ. Պատարագ: Սբ. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են Քրիստոս հարյավ ի մեռելոց ավետիսով, պատասխանում՝ Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սբ. Զատկից սկսած հիսուն օրերը մինչև Հոգեգալուստ (Պենտեկոստե) Հայ Առաքելական Եկեղեցում կոչվում են Հինունք կամ Հինանց շրջան՝ նվիրված Տիրոջ Հարության և Համբարձման խորհրդին: Այդ պատճառով ամբողջ շրջանը կոչվում է Տերունի: Հինունք անունը ծագում է հիսունքից: Առաջին քառասուն օրերը նվիրված են Հարուցյալ Քրիստոսի երևումներին: «Նա իր չարչարանքներից հետո իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում երևալով նրանց և խոսելով Աստծո արքայության մասին» (Գործք 1:3): Հինանց շրջանի վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը: Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով (այս տարի՝ մայիսի 11-ին): Համաձայն եկեղեցու կանոնների՝ բոլոր հիսուն օրերն ուտիք են, այսինքն՝ այս շրջանում չկան պահոց օրեր և թույլատրելի են բոլոր կերակրատեսակները:

## LIVE STREAMING:

We are pleased to inform Armenian Community Members and our Parishioners that we are live streaming all our services during Covid 19 Pandemic on our face book page. Alternatively you may reach us via internet at **https://www.facebook.com/StYeghiche** .

## Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ. ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ

«*Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում*» (Ղուկ 1:35;37)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Յարուցեալ մեր Տիրոջ անունը կրող քրիստոնեայ եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,

Զատիկ է, որ սուրբ տօնն է մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան: Ամբողջ Մեծի Պահոց շրջանը եւ Աւագ Շաբաթը պատրաստութիւնն էին այս օրուան: Այսօր տօնական մեծ հանդէսն է, Փեսայի հարսանիքը, որտեղ ուրախանում են ոչ միայն մարդիկ, այլ սուրբերն ու հրեշտակները: Այսօր մխիթարւում են սգաւորները, յոյսով են լցւում յուսահատները, ծիծաղելու եւ ցնծալու առիթ են ունենում լքուածներն ու հիասթափուածները, հաւատի մէջ վերականգնւում են թերահաւատները….

Հրէական Պասէք (երբ. פֶּסַח *Pesah, Pesakh, Անգլ.* Passover)՝ “անցում” բառը մեր հայրերը “զատիկ” են թարգմանել, որպէսզի մենք բառի մէջ անգամ զատուելու պատգամ տեսնենք: Այսօր մեր զատուելու, առանձնանալու օրն է մահուանից, ապականութիւնից, դժոխքից ու վախից, ազատուելու աշխարհի իշխանի կապանքներից ու բանտից, աւելի իրական զգալու Արքայութեան մեծ խնջոյքի հրաւէրը: Այսօր խաչի վրայ զոհաբերուած Գառն Աստուծոյ Յիսուսը մեղքերի մեր գիրն է պատռում՝ մեզ յայտարարելով ազատգրուած մեղքի պատժից, երբ հաւատում ենք Իր խաչելութեանն ու յարութեանը: Մենք կարիքն ունենք զատուելու, ինչպէս գերեալ ժողովուրդը զատուեց՝ դուրս եկաւ Եգիպտոսից, չը մնաց նոյնի մէջ եւ գնաց Աստծո հետեւից դէպ Աւետեաց երկիր: Հին Ուխտի Զատիկը հիշատակն էր եգիպտական գերութիւնից Եբրայական ազգի ազատագրման, Քրիստոսով հաստատուած Նոր Ուխտի Զատիկը հոգեւոր մեր հոգեւոր ազատագրման յայտարարումն է:

Մենք Քրիստոսով Երկնքի Արքայութեան ճամփորդներ ենք, դրախտ վերադարձողներ, հոգեւոր մեծ յաղթահանդէսի մասնակիցներ: Այլեւս անբեկանելի է երկիրը երկնքին կապող կամուրջը, քանզի Քրիստոս Իր խաչը դարձրեց երկրից երկինք ելնելու աստիճան, կամուրջ: Այլեւս մահը յաղթուած է եւ մենք էլ առաջին դարի քրիստոնեաների հետ եւ նրանց պէս կարող ենք երգել. «*Մահը կուլ գնաց յաղթութեան: Ո՞ւր է, մա՛հ, քո յաղթութիւնը, ո՞ւր է, գերեզմա՛ն, քո խայթոցը*» (Ա Կորնթ. 15.54): Փարատուած է մարկանց ամենամեծ վախը՝ մահը, քանզի քրիստոնեան այլեւս վախ չունի մահուանից, որովհետեւ ուր էլ գնայ, գիտէ, որ Փրկչի հայեացքի տակ է, Նրա խնամքի ներքոյ:

Այսօր էլ դեռ Քրիստոսին հաւատացողներ կան, որոնք տկար են հաւատքի մէջ, անհաստատ են եւ անվստահ: Յատկապէս մահուան պարագան, որ հաւատքի իսկական մի քննութիւն է քրիստոնեայի դէպքում, կարող է շատերին հոգեւոր տկարութեան մղել: Զորսօրեայ մեռեալ Ղազարոսին կենդանացնող եւ «*Ես եմ յարութիւն եւ կեանք*» ասող Յիսուսի մահն անգամ մի պահ մոռացնել էր տուել Մարիամ Մագդաղենացուն, որ Լուսաւոր Վարդապետը միայն կատարեալ մարդ չէ, այլ նաեւ կատարեալ Աստուած, որ իր զօրու է յաղթելու մահին, յարութիւն առնելու: Առաջին հայեացքից Մարիամը չը ճանաչեց Յիսուսին՝ իր սիրելի Վարդապետին, կարծելով, թէ պարտիզպան է: Միայն երբ Յիսուս կանչեց “*Մարիամ*”, հարազատ ձայնը փարատեց վշտի, կասկածի եւ որոնումի խաւարը, եւ Մարիամը ճանաչեց յարուցեալ Ուսուցչին: Արդեո՞ք մենք կը ճանաչէի՞նք Քրիստոսին, եթէ մեր դիմաց գար: Մենք պէտք է սովորենք ճանաչել Փրկչին Իր ձայնից, որ մեզ է հասնում Աւետարանից, առաքեալների եւ եկեղեցու հայրերի պատգամներից, պատարագի եւ մեր աղօթքների միջից: Մենք պէտք է սովորենք Քրիստոսից, որ Մարիամի պէս տրտմած եւ որոնող մարդկանց մօտենանք եւ հայեացքը դէպի Յարուցեալ Փրկիչն ուղղենք:

Տիրոջ դատարկ գերեզմանում առաջին աւետիսը հրեշտակները տուեցին կանանց, որոնք էլ փոխանցեցին առաքեալներին: Այսօրուայ հրեշտակները դուք էք, առաքեալների մօտ առաքուած աւետաբերները դուք էք, որոնք վկայում են, որ իրապէս Քրիստոս յարութիւն է առել: Գրաբարեան մեր լեզուի մէջ “հրեշտակ” բառը նաեւ “պատգամաբեր, բանբեր” բացատրութիւնն ունի:

Այդ բարի լուրը՝ Աւետիսը, փոխանցւում է բազմատեսակ կերպերով՝ լոյս ճրագով, ողջագուրումով, կարմիր հաւկիթով: Աւանդութիւնն ասում է, որ այս նոյն Մարիամ Մագդաղենացին էր, որ կարմիր հաւկիթը մատուցեց օրուայ կայսերը եւ ուրախութեամբ յայտարարեց Քրիստոսի յարութեան մասին կայսերական պալատում:

Ուրեմն, եկէք մենք էլ այս զատկական ողջոյնի տարածողները լինենք, Քրիստոսի եկեղեցու պատգամաբերները դառնանք, Երկնքի Արքայի բանբերները լինենք ամենուր՝ գերագոյն բարի լուրը փոխանցելու բոլորին, թէ մահը յաղթուած է, քանի որ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Յարուցեալ Փրկիչ Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն: **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

## Your Donation to the church,

St Yeghiche Armenian Church Parish welcomes your donations for Easter Sunday prayers and your annual family membership contributions. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***“St Yeghiche Armenian Church”***.

You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

Scan. Pay. Go.

Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you* St Yeghiche Armenian Church Parish Council

## 3: Հոգեհանգիստ - Memorial Service

**ATTENTION**

St Yeghiche Armenian Church doors continue to remain open for you to join Easter Sunday prayers however, please be advised that due to COVID-19 social distancing restrictions and with your safety in mind, the church will have reduced seating capacity.

We highly recommend early arrival to secure your seats. There will be absolutely NO standing allowed inside the church or in the aisles.

Please sign in on entry, use the hand sanitizers provided. Face coverings must be worn at ALL times while entering and during your attendance in church.

Council members will monitor the numbers attending and your understanding is highly appreciated.

You may still follow our Sunday Divine Liturgy broadcast live on our Facebook page or through web search https://www.facebook.com/styeghiche. May the Lord's blessing be with us all

**St Yeghiche Armenian Church Parish Council**

**DOONORHNEK**

St Yeghiche Armenian Church is accepting all House Blessing requests "DOONORHNEK" from this Sunday and onwards. We invite and encourage our congregation to register their request with members of the Parish Council who will be glad to take down your request at the entrance of the church, or call our church desk on 020 7373 8133 or write to info@styeghiche.org.uk .

This is a long established Armenian church tradition handed over to us. Let us keep and enjoy its benefits. **Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

## ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

**Requiem Service (Hokehankisd)**

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

## ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**